Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 11-ի N 2643 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 1-ի N901-Ա - N910-Ա, 2022 թվականի նոյեմբերի 3-ի N911-N922-Ա, 2022 թվականի նոյեմբերի 7-ի N 923-Ա, 2022 թվականի նոյեմբերի 8-ի N 924-Ա և 2022 թվականի նոյեմբերի 9-ի N 925-Ա - N 928-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N902-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում որոշման բովանդակությանը։

2. N905-Ա որոշման մեջ հղումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթին՝ ավելորդ է։

3. N911-Ա որոշման մեջ Հայաստանի Հանրապետության Արթիկ համայնքի ղեկավարի փոփոխվող որոշման ամսաթիվը վերնագրում և բովանդակությունում տարբեր է գրառված, բացի այդ որոշման նախաբանում հղումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի դրույթին՝ ավելորդ է։

4. N 910-Ա որոշման վերնագրում «փոփոխություն» բառը ավելորդ է։

5. N 919-Ա որոշման դրույթները սխալ են համարակալված։

6. N-921-Ա որոշման 2-րդ կետում գրառված հղումը ավելորդ է, քանի որ նախաբանում այն արդեն գրառված է։

7. N923-Ա և N924-Ա որոշումների 2-րդ կետերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ. Նիկոյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 1-ի թիվ թիվ 904-Ա, 909-Ա, նոյեմբերի 3-ի թիվ, թիվ 911-Ա, 912-Ա, 919-Ա, 921-Ա, 922-Ա, նոյեմբերի 9-ի թիվ թիվ 926-Ա, 927-Ա, 928-Ա, որոշումների վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 904-Ա որոշման մեջ ինքնակամ շինության օրինականացման համար սահմանված վճարման ենթակա գումարի հաշվարկը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված Արթիկ քաղաքի համար սահմանված շինությունների տարածագնահատման գոտիականության գործակցին:
2. Համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 912-Ա որոշման մեջ նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը չեն համապատասխանում միմյանց /հիմք՝ ՀՀ հողային օրենսգիրք 10-րդ և 14-րդ հոդվածներ/:
3. Համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 919-Ա որոշմանը հղում է կատարվել ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի <<Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուիսի 30-ի թիվ 479 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 828-Ն որոշմանը, որով կարգավորվում են հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործերի գործունեության իրականացումը և հողամասերի գործառնական նշանակության փոփոխություն: Մինչ դեռ Արթիկ քաղաքը ունի հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (տարածական պլանավորման փաստաթղթեր, գլխավոր հատակագիծ): Հետևաբար հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելիս պետք է ղեկավարվել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանարեպտության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակակգծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի թիվ 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի թիվ 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1920-Ն որոշմամբ

հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայր) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքնության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգով>>:

4. Համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 3-ի թիվ թիվ 921-Ա, 922-Ա և 927-Ա որոշումները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի դրույթներին:
5. Համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 926-Ա որոշման մեջ պետք է հղում կատարել ՀՀ կառավարության 2006 թվականի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի դ) ենթակետին:
6. Համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 928-Ա որոշմամբ համաձայնություն է տրվել համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.00048 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով, ավտոտեխսպասարկման կայան կառուցելու նպատակով: Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 263-Ն հրամանով հաստատված 33-րդ աղյուսակի 1-ին կետի հողամասի նվազագույն մակերեսը՝ 1 ավտոմոբիլի հաշվարկով պետք է լինի առնվազն՝ 0.01 հա, կամ 100 քմ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ-ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 3-ի № 919-Ա որոշման մեջ անհրաժեշտ է հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը կատարել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի № 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման>> կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, քանի որ Արթիկ համայնքի Արթիկ քաղաքն ունի գլխավոր հատակագիծ:

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 3-ի № № 921-Ա, 922-Ա և նոյեմբերի 9-ի № 926-Ա և № 927-Ա որոշումներում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 35-րդ կետի բ) ենթակետին արված հղումը չի համապատասխանում:

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 1-ի № 909-Ա և նոյեմբերի 9-ի № 925-Ա որոշումների վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Խ. ԽՆԶՐՅՅԱՆ

Կատարող Արմենուհի Մկրտչյան
Հեռ. (0312) 49000*166